

լովոր աղէկ օրէնքները հարկաւոր են, բայց առանց բարուց դաստիարակութեան օրէնքները բանի չեն գար, ամեն տեղ դպրոցներ կանգնեց ուր սորվեցուց, չէ թէ մեր ներկայ գիտութիւնը, այլ նոյն ժամանակին գիտութիւնը, վասն զի այս հասարակաց աղբիւրներէն կրնար թափել հեղուլ միայն իր փափաքած հոսանքը:

Այս աշխատասէր առաքինութեանց վրայ քանի մը տկարութիւններ աւելցընելով՝ որ իր սրտին ազնուականութենէն կու զային, իր բազմաթիւ որդիկներէն պատեալ, պալատանցը մէջ կեցած որ հարուստ կալուածներ էին, բարի թագաւորի մը պէս հոն ապրելով, այնչափ սիրելի որչափ իմաստուն և խորունկ մտածող, աշխարհակալէ մը զօրապետէ մը աւելի լաւագոյն, կայսրութեան զիխաւորի մը կատարեալ օրինակ եղաւ, զմարդիկ սիրելով, անոնց սիրոյն արժանանալով, միշտ իրենց բարիք ընելու ուշադիր, և կարելի է թէ երկրիս վրայ թագաւորող ամեն միահեծաններէն աւելի բարիք ըրած ըլլայ:

Ալեքսանդրներու, կեսարներու, ահաւոր նկարագիրներէն, որ զաշխարհ տակն ու վրայ ըրած են, աւելի իրենց փառքը տարածելու քան թէ բարիք ընելու համար, ինչ հաճութեամբ այս բարերար, վեհ և պայծառ կենդանագիրը կը նկատենք, միշտ ուսմանց կամ մարդկանց երջանկութեան դրազած, ուր միակ տրտութիւն մը կ'երևայ, բայց իր վերջիններուն մէջ, այսինքն է Նորմաններուն սարսափելի նաւերը երեակայելը, որոնց ընելիք աւերածները կը նախագուշակէ առանց սանձահարել կարենալու: Այս է որ աշխարհիս մէջ շինած կատարեալ ընթացք մը չէ, նոյն իսկ ամենէն ընդարձակն, ամենէն շին, և կեանք մը երջանիկ չէ մինչև իր անկումը, նոյն իսկ անիկայ որ ամենէն աւելի արժանի եղած է երջանիկ ըլլալու:

Կը շարունակուի:

ՃԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶՈՒԱՐ ՃԻՑԵՐՁԻ ՅՂԱՋԻ ՔԱՀԱՆԱՑԻ

(Տես Համար 320)

Այսուհետեւ պատմեմք յետ Յարութեան ձանապարհի պատրաստուրիւնն, կամ հոն մնալնիս, կամ ձանազի խաղալն, կամ Պապօյին հափսի դրանելն, կամ քեահիեային պողոշչմիլ լինալս, և կամ Եաֆա գաղերնիս:

Սովորութիւն է սուրբ Յակոբ յորժամ փախստական գան, գնայ Հէննէ եազըճին նոցա հոգէտունն. և յանուանէ գրէ մի ըստ միոջէ, և ելանէ դուրս. անցանի երկք օրն և ձայնեն զնոքա և գրեն զգարպասն, ամեն մարդ իւր հալին կօրէ. եարան զամազն իւրեանց մէջն է. զինչեւիցէ կու գրեն. բայց ստակն յետենէ կուգայ հետ Հալպա քէվրանին. և էին քառասունը չորս հոգի: Չայն լացաք, թէ Հալպա քէվրանին հետ ոմն Մինաս վարդապետ կայ ակնցի, նա կուգայ և Պապօն 'ի հետ սորա է: Ապրիլի տասնըմէկ օրն Ղազարույարութեան գնացաք 'ի Բեթանեայ, ուստ արարաք. սոյն օրն Ալի փաշին քեահիեան եկ, սորա հետ Պապօն էքմէքճի պաշուն չատըրն նստեալ, և մեքդարձաք 'ի սուրբ Յակոբ վանքն. 'ի միջի վանուց եղեալ չորս հոգի երեանին պահեցին: Եւ ով ոք են պահվողքն. — Պօղոս վարդապետն, Հէննէն. Ղազանճի օղլուն, տիրացու Արութիւնն. մինչեւ ութը օր երեսնին պահեցին. զիրա այն պէս ձայն մի հանեցին թէ Պապօն զնոքա զայտիպէնստով Օսման օղլուն հուզուր տանին. Նորա համար ահ կրեցին: Այս Պապօյին և ակնցի Մինասին գալն՝ այն չորս հոգւոյն երես պահեն, շատ չէ, վանիցըն տասը քէսէ ստակ զէն եղեւ: Նա տեսանեմք եկն չուխատար մի վանք, և կու հարցանէ թէ, պունտայ պիր փափաղ վարտըր Զուար Ճիւկէրճի օղլու տէրլէր. պանայ կօստէրին

օտասոր ներէտէ տիր։ Եւ յայնմ ժամու ես հոն չէի. մեր հաճի Սուքիեասն ու սուլով հարցեր թէ նէլլէրսին. նա այլ ասեր թէ Ըստամաղոլտան կէլիրիմ. քեա հիտիմ վարտը քէնտիսիսինէ։ Ապա ինձ զապար արին, եկայ չուխատարին պուլաշմիշ եղայ, և ետուր զթուխտն ինձ. որ ուղարկեալ է ինձ ջուխանի Հաճիպալին, որ քսանուհինգ զուուշ տուեալ տունն տիւան էֆէնտիսին, և աստ փոլիցա արեր որ ես առնեմ զստակն և բերեմ Ծստամաղուլ։ Մէկ քանի անդամ գնացի եկայ, թողէ այսօր կամ վաղն կ'ասէ, նոր կիրակի գնացի ստակն համարեց և ետուր. և թխտերն գրեալ տուաւ ինձ. մինչ 'ի դռնէն զուրս ելանեմ ասելն 'ի բաց, Օսման չուխատարն եկաւ թէ ստակն առիր մի. և ես ասի թէ առի ևս թխտերն 'ի հետ. – եկ քեզ աղային տանիմ։ ինկաւ առջևս գնացաք Շամայ դռնէն մինչև 'ի չատըրն, եարան երեկոյ էր, մինչև գնացինք շատ զահմէթ քաշեցինք. քեահիայն հարցուց թէ զու Պալիցին ինչն ես, և ես ասացի թէ նա իմ փեսան է. և յետ նորա զահ վէ բերին, խմեցի. ասաց թէ վաղն եկ քեզի թուխտ տամ. և ես միուս օրն զնացի փէշքէշով, և մորվաց սանտր մի, երկու դլուխ չէքէրլէմէ. խիստ հազ արաւ. թէսկէրէ մի ետուր, թէ եափայու աղախն, թէ երկու նէֆէրէս զափար չառնես։ Մինչև թուխտ զրելն յետ դարձայ վանքն, և ոչ գտի զքիրածին իմ. պատճառն որ հարցանես. առաջի եղանակին յետ Յարութեան Եափայ գնացաք, գնացող ըխտաւորըն կու տանին. ապա յետ զառնան գան ցամաքով գնացողն կու տանին եղեր, այն Ակնցի Մինասն այս տարի սէպէալ եղաւ որ թէ ցամաքով գնացողն թէ Եափա ինողն միատեղ ելան. նորա համար մեք մնացաք վաթսունըւերկու հոգի 'ի սուրբ քաղաքն յերուսաղէմ։ Էր օրն երեքշարժի, և չորեքշարժի գնացաք 'ի սուրբ Աստուածածին և տեսաք անդ զպատարագն և ետ եկանք 'ի սուրբ Յակոբ։ Սոյն օրն Դաւթայ մարգարէին սարայն՝ ճանապաղն հալաթ կապեց. և յետ

օր հասարակին մէհտէրղանայով խաղաց, զայն ևս սէյիր արաք։ Ապա հինգշարժի զՊապօն բերդն վերուցին։ Գնացաք Փրկիչ պատարագ տեսաք. յետ օր հասարակին կրկին գնացաք 'ի սէյիր ճանպաղին. նա Պապօն վերն նստեալ սէյիր կ'անէր. ալք ոմանք տիզ տարին, ասին թէ, այսպէս է հափան որ նայ բարձր տեղ նստեալ կու հայի և թամսաշ կ'անէ. նա և մեզ աղերսեց ասելով թէ այս մէկ օրս ինծի պախշեցէք վաղն տեսանէք. և ես լուայ որ վայր ի ջուցեր են. գնացի մօտն հանդերձ հաճի Սուքիեասով. զիրա տիզտարն թուխտ պիտար ինձ. նա նստեալ անճարակ ապուշ մնացեալ։ ի միուս օրն ուրբաժ 'ի յետ վճարման ճումաին չարսըյին մէջովն մէհտէրղանան չալերով և եօզուրժճին առջևէ եկին մինչև խաղալու տեղն. զայն օրն ևս թամաշա արաք. զիրա շատ հիմնէր ցոյց ետ. եղև երեք օր լման։ Յետ թամաշային գնայեաք վանքն որ պատրաստութիւն տեսեալ էաք. մինչև 'ի եաթժու նստէաք և ուրախանայեաք. 'ի մայիսի երեք պատկեր աւուր շարաժի՛ առաւօտու պատարագն Պլխաղիրն եղև. եկն տաւարնին և մեք հանդիստ բարձաք. քանզի ուր է վախտունուերկու հոգին, ուր է չորս հարիւր հոգին. և երկրպագեցաք 'ի սուրբ տեղին, և պատրաստեցաք 'ի ճանապարհ խաղալով և խնդարով ուրախութեամբ մինչև 'ի յիշէմէ. 'ի փարիին գալն մեր՝ յենկիչըն զխափարն կ'առնէ. մի մի կ'անցնիս միուս կողմն. անդ տեսայ երեք փէլլահ որ զյորեանն ձեռօք կու հնձեն. և կին մի այլ յետ սոցա. մէկ փէլլահն ցատկեց ջորուն չըլպըրն բանեց, թէ հատ զափար. և ես ասացի, թէ լէլ զափար. ձայնեցի զէնկիչըն, եկաւ ափուցն առաւ. զխագին դարձուց թէ հէլլիւն։ Այս զարմանք չէ, փոքր տղայ մի երեք տարվան 'ի մէջ ցորենոյն կանգներ զլուխն բաց, շապիկ մի հաքած, ձեռքն երկնցուցեր թէ բարակ ձայնով հատ զափար. բազում տեղ ծիծաղեցաք այն տղին այնպէս անելոյն. 'ի զալն մեր յիշէմէ սովորութիւն է

խանն կու իջանեն . և ինձ տուեալ էին խրատ յառաջմնէ , թէ յորժամ զնաս յ՛՛մէ՛ չիլինա թէ պուճախ տեղ մտնես այլ 'ի բաց տեղ իջեւանէ . զիրա անդ կայ ճանավար մի՛ որ անունն տէ լէն կոչի , տէրն փրկէ , յորժամ զմարդ խայթէ՝ խոցոտէ իբրև զշուտիկ . առաջի գնացող ըխտաւորաց զբազումն խոցուեալ են , ոմանց երեսն և ոմանց զպաճախներն որ մարդու հալէ ելէր էին . և մեք անմխաս մնացաք 'ի նոցանէ 'ի խրատոյ բարեկամին : Եւ զնացաք 'ի զատին , շահեցաք զնա որ զմեր դաֆարն ճանրան առին . գիշերով զաֆանին եղին չորս չորս փարայ մէկ խանճին , երկ երկերկու փարայ մարդ գլուխ ժողովեցին : Եւ առաւօտն բեռցաք կամիմք գնալ 'ի Եաֆայ ճանապարհին սիրուն անձրւ մի կերաք և թրջեցանք . սահաթն երկքն զնաց եկանք հասաք 'ի Եաֆայ , և իջաք ոմն Եազը յնի Ազարիեայ անուն քրիստոնէի միոյ մահացէնն . և բեռներն անդ գրինք . և փոքր փէքէ մի ունի , անդ նստաք : Եկ տես եղբայր որ զմեղ մուհասէրէ արին . թէ իմ քռնած նաւն եկ . միունն թէ իմ քռնած նաւն եկ , պօլիւկ պօլիւկ . Եւ ես ասացի թէ օդնած եմ , կացիք մինչեւ 'ի վազն տեսանեմք թէ ինչպէս կու լինա , միուս օրն հեծայ սանտալն հետ հաճի Սուքիեասովն և գնացաք 'ի ծովն ուր էր նաւն . և տեսայ որ այսչափ նաւին մէջն մին նաւ կայր մեծ , զիրա ամենեքեանն փոքր էին . մանաւանդ թէ թաւուխճի զատէին քռնած նաւն որ իլիմանին մէջն բեռցուցեր . 'ի գնալն մեր նաւն իսկոյն զամարա մի բռնեցի վեց զուռուշ , և ասացին թէ շուտով ուռուպաթ բեր , և միուս օրն ինչ որ կայր ուղարկեցի նաւն , որ է մայիսի վեց , օրն երկքարթի , և մեք ամենեքեանս միահեղուն մտաք նաւն . և 'ի մայիսի եօթն օրն չորեքարթի առաւօտուն չայր և Որդի և սուրբ Հոգի ասացաք , ճանապարհ ելաք , երկք նաւ , երկուքն փոքր և մեր նաւն մեծ . յորժամ կու անցնէաք զնու-

սա՝ յէլքէնն զորս իքէն՝ երկու կ'անէր թէ զան հասնին . զպատճառն կու հարցանես , եղբայր , երկու նաւն իւրն էի և միւսին այլ ևս հիսէ ունէր . նորա համարչէր զատիիր : Այս մեր նաւավարն Ղուշատալի է որ անունն չաճի Եանի կոչի . Եկեալ Պատմոս կղզին կարգըվէր և ստացեր բազում ինչս և առեր փաթենթայ . շախրախ մարդ մի . և թայֆան ևս միւնիս , մանաւանդ աշճին . մէկ խօսք խօսի՝ և նորա շուտով կատարեն զասացեան : Եւ զայս 'ի վերայ ծովու զրեցի մայիսի ինը՝ օրն ուրբաթ . տեսանեմք այսուհետև թէ ուր գնալոց եմք , Աստուծով զայն ևս գրելոց եմք :

Ի յելանելն մեր Եաֆայու անցաք Խպրըզ , ատալեայ քօրֆէզի , Ատլրասան , Ֆինիքէ , Քէքովա , Ղրապուռնու , Միյիս . այս վերոյ գրեալ Ատալեայի քօրֆէզն երկուշաբթի երեկոյ փականք , որ մի կողմն բարձր իլիման լեռներով քան զշափն աւելի բարձր , հիանալի և զարմանալի . յետոյ զարձուց զզլուխն . մինչեւ 'ի լուս գնացաք , բայց հաւա չի կայր . առաւօտ եղեւ . վառտան¹ մարդ հանեց , իսկոյն զալիոն մի երևաց , թօսկէրի արաւ և թիեանն անցուցին դէպի եալուն . և ես աստ ոչխար մի իսրար արի թայֆային մեք ևս լուռ կեցաք . մինչեւ 'ի եալուն հասնիլն՝ արեգակն ծագեաց : Եւ ունէր մեր նաւին տէրն այլ ուրիշ նաւ մի որ ասացի որ մեզմէ չէր զատիիր . նա ևս եկն մեղ հասաւ , ասաց հոռմերէն , ամբուրայի մէթոյ եալցինի , և նա ասաց՝ ամ զի . և մեր ըուէիլն ասաց , Էհիս քաթոյ քի Արմանի . և նա ասաց , Էյնի քի արմանի մէյդոյ այլայինէ : Եւ մեք ստուգիւ իմացաք որ ալայ էր . տիւլպիւնով նայեցաք որ երեք զալիոն և հինգ խոշոր նաւ : Միուս կողմն որ իլիման ասի ինքնէ ֆինիքէ . նորայնէ ել դուրս տասնը մէկ նաւ . ապա յետ զարձաք քոմիս եկաք մինչև օր հասարակ . անդ կեցաք յոյժ ուրախութիւն արաք , և ապա օր հասարակին այն երկք զալիոնն և քովի եղեալ

նաւերն երկաթ քաշեցին ելան դուրս , և մեք ընդ նոսա : Աստուած բարի ճանապարհ տայ , ամմայ եարան մէլթէմմի առաւ որ զնաւերն տաղըթմիշ արաւ : Այս մեր նաւալարն վարպետ գոլով յետ դարձաւ , իլիման մի մտաք որ Քէ-քովա կոչի , չորս տարի եղեր որ այս բերդն շինուած է . սորա պատմութիւնն շատ է . մի կողմն ատայ մի երկայն որ ժամանակաւ շէն է եղեր . ոմանք կ'ասեն թէ Սոգոմի պէս ներքեն վերով եկեր . եափուներ այնչափ խոշոր քարեր զարմանալի . կէսն յատակ ծովուն և կէսն դուրս . շէնքերն կու երևայ , զըռներն և փէնճիրէնին հիանալի . այս բերդն շիշնած իքէն՝ դուրսանին տունն է եղեր . աստ զնաւն կու եղէ և ջուրն կ'առնէ . և լեառն մարդ կու հանէ տեսանէ որ նաւ գայ՝ անկարծ դուրս կու ելանէ կու առնէ . ապա քանի շինուեր է՝ աստ չի կարնար մտնել , զիրա բերդն սիրուն թօփէր . նորաբոյս է , ամմա շատ շէնլէնմիշ կու լինայ : Աստ կու ելանեն ոմանք ճանապարհորդք 'ի վախէ դուրսանին . և գնան ցամաքով տասնըչորս զօնախ մինչև 'ի Պուռասայ , և ոչ ահ կայ 'ի ցամաքին , և մեք տեսաք անդ տաճկի հաճիներ որ ելեալ էին շատ զահվէ ունէին , և քիրաճիքն անդ էին : Այլ եղբայր , այնչափ զցիթիւրին որ ասած խօսքն ճորով կու հասկընաս . տափակ զրոյց : Այս իլիմանս երկու պօղազունի . վարի պօղազէն մտնողն վերի պօղազէն դուրս կու ելանէ . փոքրութիւնն կամ մեծութիւնն հարցանես . մինչև հարիւր յիսուն նաւ կու առնէ . քին ասացի քեզ : Աստ մայիսի տասուիրեք օրն երեքշաբթի օրն մտաք , և ելաք սանտալով դուրս , ոմանք հաւ առաք և ոմանք հաւկիթ . գնացաք 'ի նաւն հանկաք : Բայց միուս նաւերն երեկոյ դէմ վէրի պօղազէն թուռնայ զաթարի եղեալ եկան մուան սէլիմ քաշելով . բայց զալիսններն դուրս մնացին . գիշերն լուսունկայ , մեք 'ի քուն ուսուլով կու ելանէ պօղազէն դուրս որ խկի շիմացաք . ահա կու գնամք դէպի Ըռատօղ 'ի մէջ ծովուն դրեցի : Մայիսի տասնըեօթ օրն շարաթ Ըռատօղ մը-

տանք : Եաֆայու մինչև Ծռատօղ տասը օրն եկաք , և չորս օրն անդ կեցաք . հինգերորդ օրն երեքշաբթի յետնուց ելաք ամենեքեանս քսանըւերկու նաւ էաք . հինգն զալիսն էր . մեր ըռէիզն մարդու չի խօսիր , զիրա գիտածն կ'անէ . շատ վոլմայ արաք քան զչափն աւելի . մէկթէրթիպով ալային նաւերն յետ ձգեց . ինքն յառաջ անցաւ մինչև 'ի Սոյուք պուռունն անցաւ , իջաք Ըռատօղու եալուն . սիրուն մէլթէմ մի էառ , շատ յառաջ ցաթկեցանք . հազիւ մայիսի քսանըօրս օրն իրիկուն հասանք իստէնքօյ , մեք կարծէաք թէ նա անդ կու մտանէ . զիրա յառաջմանէ խօսքերնիս այնպէս էր , մեք ըխտաւորքս նստեալ կերաք խըմեցաք և ննջեցաք ամեն մարդ իւր տեղն : Ամմա տես թէ ինչ արաւ , թիեանն քաշել տուաւ անմուռնչ . առաւաւ եղեւ տեսանք որ իստէնքէօյ անցեր ենք հինգ միլ հեռացեր ենք . շատ միւճէտէլէ եղեւ թէ էր եանաշմիշ չեղար . նա պատճառ գտաւ թէ հավան մեր չէր , նորա համար չի գացի . ամմա սուտ էր , զիր , ահ ունէր ալայի նաւերուն . ձեռք ինկնէր՝ զտէյէնէկն կու սըրբէր . մայիսի քսանըհինգ օրն շաբթի առաւաւուն՝ ուղուրնիս երկու խոշոր զալիսն տեսաք , որ իպրահիմ հօճան էր , կամի թէ գնա Մըրսը . զիրա Մըրսը մօլլասին մէջն էր . այլ ևս զափուտաններ կայր փոխելու . մեք զայս Ըռատօղ լսեցանք . և ես ասացի ըռէիզին թէ կանչեմ կանչեմ կանչեմ թէ մեր նաւն ալայ կէմիներուն փախեաւ . նա ինձ աղերսեց թէ երկու հարիւր կու զարկնէ և ոչ պակաս : Եւ ուղի անկեալ մեր ճանապարհն կու գնամք . մինչ որ եկանք անդ որ թօհաննու աւետարանչի կղզին՝ որ Պատմոս կղզի կոչի . անդ գրեաց զաւետարանն . մեր նաւն անտի էր . թայքան խօսք անցուց , կամեցանք որ անդ մնայաք այսմ գիշերի . զիրա օրն շաբաթ էր և լուսինն նոր . և նաւալարն ոչ կամեցաւ իւր ճանապարհն ձեռաց չի թողուց . անկարծ գիշերն ֆուռդունայ մի եղեւ , որ ամեն յէկքէնն վար էառ , զուրու տիրէկով գնացաք . և ոչ գնացաք .

այլ գիշեր էր և մութ . վախեց թէ չիլի . նա թէ սախտութիւն մի տամ մինչև 'ի լոյս . քանզի զոյին մօտ է երկու կողմանէ : Եթէ հարցանես ուր էր տեղն այն , Սուսամ պօղազի , որ կոչի գալապաք թաշի . սիրուն լոտոզ մի էառ ինկաւ առաջն , գնացաք բուբա , մինչև 'ի Սախրզի առջն . և ապա հովն էջ և մեք տեսաք որ սէրթ մարդ մի է . ուղարկեցի մահտէսի Պետրոսն և մահտէսի Սարգիսն . նա ոչ խօսք անցաւ եանաշմիշ լինալու Սախրզ . յետ նորա նայիմ կամաց մի քովս եկաւ . ինձ ասաց , թէ ահա ձեր խաթեր համար եանաշմիշ կու լինամ . անճախ մինչև յետինք գալ պարտիք նաւն և մեք յոյժ ուրախացաք . մտաւ դէպ 'ի բերդն , կամեցաւ թէ երկաժմ ձգէ . տեսանք որ երկու մանտը նաւ եկաւ . մէկն հոռոմ միուսն տաճիկ , էր 'ի միջի նաւին Եօրկօյ անուն թայֆայ մի որ ըռէիզին պաճանախն էր . գնաց թայֆան բովանդակ մէկ զմէկ ձգեց , թէ աստ մահ կայ միաբան մի ուղէք դուրս ելանել . նոքա ևս միաձայն կանչեցին թէ չեմք թողուր որ դուրս ելանէք , եթէ ելանէք ներս չեմք առնէր . յետոյ հարցուցին այն հոռոմ նաւավարին թէ տեղս մահ կայ թէ ոչ . նա այլ կիպակատար առւաւ պատասխանին . թէ կայր ամմա հիմայ աղէկ է . յետոյ , տաճկին հարցուցին երդմամբ . նա ասաց թէ վարտըր , ատամ , նիչին եալան սօյլէյիմ : Աստ կայ երեք նաւ երկուքն չէյթիէ , մէկ սիրուն փաք դալիոն մի փրանսըզի . նորա փուլիքանն եկաւ դէմ մեզ , էհարց թէ ուստի կու գաք . մեր ըռէիզն ասաց թէ եաֆայու . նա այլ հարցուց թէ դուրսն ինկիլիզի նաւ կայ մի . և մեք ասացինք թէ չի կայ . վէյալա կէմիներն էհարց , իստէնքեզյըրն ձգեցինք : Մեր ըռէիզն էհարց թէ ինչ է բերըդ . նա ասաց թէ զէթին եազի : Յետոյ մեր ըռէիզն հարցուց , թէ դուրս ելաք մի . նոքա ասեն թէ չելանք , կրակին մէջն ինչպէս երթամբ : Զայս լսեցին թայֆաքն առաւել եւս ճիչ բարձան . ես այլ տեսայ որ չի լինար , ըռէիզին ասացի՝ թէ գնա քո ճամբան . դրսէն սէիր ա-

րաք զքաղաքն , և զբերդն և պաղչանին . բայց ներս ոչ մտաք , խիստ մօտ էր . ապա հազր լինողներն թէ դուրս ելլենք տէյի , թօսկէրի նստան 'ի վար : Սորա քողին կու ինկնի Ղօյին – ատասի , աստ շուրջ եկանք մինչև օր հասարակ . հազիւ դուրս ելաք դէպ 'ի Սնատօլի ուղեց . անդ կ'ասեն Ղարապուռուն . որ ունի մեծ իլիման մի կյրի–իլիման կ'ասեն , անդ նստաք երեք օր . և ոչ կայր անդ բայց միայն փոքր նաւ մի . որ մէջն կայր աղած ձուկ . և մեք հարցաք թէ ինչ ունիս . մէկ մեծ էօրքօնոզ ձուկ մի ունէր . հանեց դուրս ձգեց կտրատեց , օխան երկու փարայ . ամենեկեան առին . նաշարն կ'ուտէ զբանարն : Եւ տեսաք այսմ երեկոյին փոքր նաւ մի եկաւ իլիմանն մտաւ . հայլի հեռու էր մեզանէ , և մեր նաւավարըն թիւֆէնկներն պատրաստեցին , և նօպէթնի զրին գլուխն և խրչն . առաւօտ եղեւ , նոցանէ մէկն լեռնէն եկաւ ձայնեց , թէ յէմիշ կայ , կ'առնէք մի . մեք այլ հարցուցաք թէ ինչպէս յէմիշ է . նա պատասխանեաց թէ , խիեար , դրդում , զէրտալի , սալոր , իլիմոն և սըխտոր . ասացինք թէ բեր . երբ եկաւ եանաշմիշ եղեւ . հայինք դէմ , առնող առնողի եղեւ . մինչև զովացանք . նոքա ևս ելան դուրս և գնացին գիւղն չորս հոգի . և բերին մեզ մէկ քանի հաւ . և նոցա մէջն մէկն կաճոյ էր , խօսաց տէր , և ես խօսիւք զնա շահեցայ . յետոյ միուս օրն գնացին՝ հավկիթ բերին . մահրամաս տուի , լից և երեր . դարձեալ ասացինք թէ գնա մեզի ոչխար բեր , գնացին գիւղն որ շատ հեռու էր երկու ուլ բերին . շուտով զիւրեանք մորթեցին . երկու օխայ միս և մէկ ճիկէր առանք . և անդ կերաք զղապախ տօլմասին որպէս թէ տունդ ես : Մայիսի քսանըութ օրն չորեքշաբթի առաւօտեան սահաթ և կէս մնացեալ երկաթ քաշեց և թիեանն քաշելով հազիւ դուրս ելանք իլիմանէն , փոքր ինչ հով կայր , եկաք մինչև յետինք Միտիլիիու առջն . ես ննջեալ էի տիւմէնալթըն , քանզի կերակրի վերայ ճաշակեալ էի , մէկ քիչ լոտօզ առեր .

մեր թայֆան ասացեր են թէ անց գնա, այս հաւան ուր կու գտանեմք. շատ չի քշեց որ անցեր էաք ապա կտրեցաւ այն քիշեր Միտիլու առաջև մնացաք: Եղբայր եթէ հարցանես, երեքհարիւր վաթսուն միլ է, բայց վաթսունն քօրդէզ է. առաւօտ եղեւ մինակ իլիման, հովի կու սպասեմք. ելանք ժամ ասինք և անդաստան արինք հանգիստ. որ է օրս այս Համբարձում. և նստեալ խահվէալթըն արաք. յետոյ զիսահվէն խմելուն զլեռներն սէյիր անելով. նա տեսնես որ սիրուն հով մի առաւ. ինկաւ առջևն, եկաք հասաք Մօլովա. սա այլ Միտիլիու է ունի գիւղ երկու հարիւր եօթանասուն և երեք զատըլիս տեղ է. շատ իւղ կու ելանէ, և բանիր և թուղ: Լամիմք Պօղչա ատան գալ և զայն. Մօլովային դէմն Պապա պուռնի օր Անատօլու է. գիմացէ զիմաց տասնըութը միլ տեղ է. սորա վերովն է Ղազ-տաղին. զայս պուռինն անցնին ՚ի բաց, երկու կողմն փէքսիմէթ կունետեն. իբր թէ սէլամէթ եկանք: Այսուհետեւ կ'ուղէ զՊօղչա ատան. աջ կողմն կայ բերդ որ էաքի Ըսպամպօլ կ'ասեն. և շէնլիք ոչ գոյ. ձախ կողմն Պօղչա ատասին. սորա դէմն Անատօլի կայ գիւղ մի, որ կեաւուր գօյի կ'ասեն. անցանել կ'ուղէր զՊօղչա ատան. ոմանք կամեցան որ հանդիպին. և ես տեսայ որ հովս մերն էր. մանաւանդ թէ գլուխն թայֆան գերեկցան թէ գնա զրուցէ որ չի մնայ անցնինք. այս հովս մեր ձեռքն չի ինկնիր. ես այլ գնացի խըշն նստեցուցի զնաւավարն, և ասացի թէ դու այս տեղս բան ունիս մի. նա ասաց թէ չէ ձեզի կու հայիմ. ասացի թէ մի կանդնիր անցիր գնայ. — Երբ այդպէս է, դա ձայն մի հաներ, ասաց. որյըրմիշ արաւ զՊօղչա ատասին, որ մենք այլ սէյիր արանք ուղածներուս պէս. ապա փօյճա արաւ, ուղեց զթէնկիղալէն. մինչեւ երեկոյ հազիւ գանսիկիցա ձգելով երկաթ ձգեց գըրսի կողմն. առաւօտ եղեւ, մեր ըուէիզն կամաց մի դուրս ելաւ զամարայէն. տեսաւ զէպ երկնուց երեսն որ հաւան մերն էր. ձայնեց զթայֆայն

երկաթ քաշեց. եկեալ զթէնկիղալէն սըրյըրմիշ անելով անցաք. սիրուն եափու որ Անատօլու է, ունի մէջն երկու հարիւր յիսուն թօփ, և ՚ի գիմաց սորա, Ուռումելու զալէն. ասկէ մինչեւ ՚ի Պօղագհիսար տամնըութը միլ տեղ է. ձախ կողմն Սօղանտէրէսի, սորա քովն Սէլվիլի պաղչան, որ օսմանցուն զալիսններն աստ կու կենան. յետ սորա յառաջ Պօղագ-հիսար, որ դիմացէ զիմաց է. ձախ կողմն Անատօլի մեծ գիւղ մի որ է Մայտօզ. գինին երկու օսման մէկ ստակ, սորա միջի հոռոմ վարպետանք ունի լաւ պատ կու շարեն. սորա սրան մօտ գիւղ մի բարձր որ Պայիլքօյի կ'ասեն. և այլ ՚ի վայր փոս տեղ մի որ Ղալաթայ կոչի: Պուռունն կ'անցնիս թէրիր պուռունի կ'ասեն որ տաճկի գիւղ է. այլ աստիս Գօղլուտէրէ կ'ասեն, որ սոխն աստ միւպահ է. յետ նորա Գալի-պօլին է. մայիսի երեսունըմէկ օրն ուրբաթի մահաէսի Պետրոսն ձգեցինք դուրս, հաւան խիստ սէրթէր, երկու երկաթ ձգեց. մեք ևս դուրս ելաք. Թէրիր տաղցի Աբրահամվարդապետն՝ անդ էր հանգերձ տէր կիրակոսով. գնացաք մահատեսի Պետրոսին տունն փոքր ինչ ուրախութիւն արաք գարձաք նաւն. և երկաթներն քաշեց, ելաք ճանապարհ. մինչեւ ՚ի լոյս հազիւ հասաք Շաբքօյին որ Անատօլու է. զթէրքիրտաղին կ'ուղէր, զիրա ըխտաւոր կայր հանելու. մէկ էլակօղի զարայեէլ մի էառ, սկսաւ վօլթայ անել գէպ ՚ի Մառմարա. կայ աջ կողմն ատայ մի որ Արագ-քօյի կ'ասեն, և ՚ի գիմաց Մառմառայուն իսկէլէն և տներն. սա որ կայ շէն է, և ձախ կողմն ատայ մի այլ փոքր գութա կ'ասեն, և տաճկերէն իրինլիք կոչի. կամիմք անդ մնալ գիշերս այս. և Աբրահ քօյիւն առաջն երկաթ ձգեց. որ իրիկուան մին սահաթ կայր. երեսուն հոգի այլ աւելի սանտալն մտան, ելան դուրս, առին հաւկիթ, մածուն, բանիր, հաց, գինի. առեալ բերին. զիշերն անդ կեցաք որ կիրակմուտ էր. ա-

սաւոտն կանուխ որ է կիրակի՝ երկաթ քաշեց դէպ՝ ի շէն ատան որ գութա ասինք . ՚ի նորա առջեն երկաթ ձգեց . ելանք դուրս գնացանք եկեղեցին , որ պատարագին հասանք . մեզի տեղ արին կանգնեցաք . ելանելն ՚ի դուրս մեծ սէփէթ մի քիրադ . եալմայ արանք , չորս ըստակ օխան . ապա հարցուցի թէ միս չի գտուիր . — զասապն հոս չէ , ասին . փոքր ինչ կեցաք , եկաւ . չորս փարայ օխան գառան միս , բերնիդ լայեխ . չորս գառ մորթեց . և ես մին գառն առի և մին վառոլ գինի , օխան փարայ մի . ըրախին չորս փարայ . ետութայֆային , քանզի առաջմանէ խոստացեալ էի :

Յունիսի սկիզբն է օրս այս . այս Շութա որ ասի՞ վեց միլ տեղ կու պտըտի բոլորն . և աստ կու ելանէ զօլեօվ ձուկն . երեք նաւ է , վեց վեց օթուրախով այնի զալեաթայ կու նմանի . երբոր պիտի գնան ըղըպն ձգելն նախ քահանայն կու ձայնեն , այազմօղ կ'անեն , ապա կու գնան մէկ մէկու հետ եարըշ կու ելանեն , գնան իրիկունէ և գան առաւօտուն . ամէն մէկ նաւ տասնը հինգ հազար քսանհազար ձուկ կայ . մէկ տեղ փայ կ'անեն և կու աղեն . որ ձերմակ ծով գնացող նաւերն աստ կու հանդիպի կ'առնէ հարիւրն յիստունը թիմը ըստակ . և սու պաշին տասնէն մէկն կու առնէ միւշտէրին և ոչ ծախողէն : Երկուշարթի ելանք ճանապարհ . աջ կողմն փոքր գիւղ մի այլ որ անուն Ղալիփ կոչի . սորա գիմաց մօտ անմարդաբնակ փոքր ատայ մի . ձախ կողմն Ուռումէլի կայ գիւղ մի որ Ղանօղ կոչի . խաղողին թուրֆանտան՝ թագաւորին աստի կու տակին . Ուչմախ տէրէ , յինկիքոյ , Ղումպազի , Պանատօղ , թէքիր տաղի . ապայ ամենեքեան մի սրայ են :

Յունիս երկու օրն երկուշարթի , ըստէին կ'ուզէր թէ զայր Ծատամզոլ Անատոլի ղըյիովն . տես թէքիր տաղցոց թալէհն որ իմնակաթ արաւ . գնացաք դէպի թէքիր – տաղի , ուշ մնացաք , քանզի երեկոյ էր . և քիւրէկնէրն տօնաթմիշ արին . հաղիւ հասաք՝ երկաթ ձգեց .

ապա կայր ՚ի միջի նաւին Շիշման մահ տէսի Յովհանէսն , ել դուրս , հանդերձ Պետրոս տղայովն . և մեք առաւօտուն կանուխ ելաք դուրս . գնացաք եկեղեցին և երկրպագութիւն արաք . ամենեցուն ձեռն մոմ տուին . և ես զաւետարանն ընթերցայ և իջայ խորանէն և ետու խաչամզուրն լի , և նորա տեսեալ ամեն մարդ իւր լայեխին տուին խաչամզուրն . տարին օտան մեզի զահվէ ալթը պատրաստեցին այր մարդոց , կերաք և ուրախացաք :

Կամիմք գնալ Սուրբ թագաւոր . երրմտաք թագաւորի բակն , անդ կայր ըխտաւոր Ծատամզոլայ . փոքր ինչ հարցուցի թէ ըստ ինչ կայ . պաշլայեցին , թէ ֆլանն մեռաւ , և ֆլանն այլ մեռաւ . մինչ որ էհաս այն տեղն՝ թէ տէր խաչատուրին իրիսկինն ևս մեռաւ : Այս բօժալից զապարն որ լսեցի՝ պաղեցայ մնացի , ամմա , եղբայր , թագաւորին մէջն ըխտաւորք լեցվեր են՝ ինձ կու հային . և ես մոտայ ներս , և համեմիթէ մին շուրջառ ետուր վերաս . կու կամիթէ խաչանգիստն ինձ անել տայ , և ես առաջմանէ տեսեալ էի սուրբ թագաւորին զօրութիւնն . եկն միտո իմ որ նաւին մէջն ոմանք մէկդմէկի հետ անկան . ասուլիս եղեւ նորա հաշտեցուցի . և ես զիմ զաթր ևս տպեալ էին՝ ամենեքեանս հաշտեցաք . ապա առի զրուր վառն ձեռքս խնկարկեցի զսուրբ թագաւորն և համբուրեցի . և սկսանք շարտկան և արարի զիսաչահազիստն . և դարձեալ ծանուցումն արի և ետու խաչամզուրն . նորա ամենեքեան տուին մինչ տասուերկու զուուշ եղէ : Այս մուրատնուս այլ հասաք . փառք Քրիստոսի : Էլլաք դուրս որ տէր նիկողոսն սաթաշմիշ եղեւ թէ տուն երթանք . և ես գնացի խամբն չի մնայ . կրկին զմեղ պատուեց . Աստուած շէն պահէ : Փոքր ինչ անդ կեցաք և քովուս վերայ պառկեցայ . նա տեսնեմ որ Եազրյան եկաւ թէ , Գայք հաճի տէսպօթայ , կէմիէ . զիրա հաւապիզիմ տիր : Եւ մեք պատրաստեցաք . ՚ի գուրս ելանելն ՚ի բաց՝ տէր Մէլիքսէթն գէմելաւ , թէ ես ձեղ կու գայի . վափիր

շախաւ արանք . զի՞նչ և իցէ կրկին զմեղ
եկեղեցին տարին . նոր պատիւ մաֆիճէ
մին սահաթ անդ նստաք . յետոյ հազիւ
իսկելէն իջաք . զմեղ նաւն ուղարկեցին :
Մեր հաճի Սուքիեասին կայր խըսում
մի՝ եկ նաւն . և մեք տուաք ստակ և վա-
ռօլներն , գնաց լից ըրախին և երեր , օ-
խան եօթը ստակ , բարկ . և ես ասացի
նորա թէ երկու փարայ զիեար բերած
պիտէիր հետ . նա ասաց թէ ինչպէս
խիեար , տահա ուշ կու ելանէ . և մեք ա-
սացինք թէ քսան օր կայ որ մեք կերաք .
նա չի հաւատաց . յետոյ զամարային
մէջն մէկ հատ մի գտաւ , ցոյց տուինք
նորա , ապուշ մնաց . պահեց թէ քա-
ղաքն կու տանիմ զայս , զիրա որ զրու-
ցեմ նէ չեն աւտար : Մինչև յետինք
աստ կեցանք , մանկ իլիման . նա տե-
սաք իսկոյին հով մի էառ . սանտալն
ներս էառ , և շուտով երկաթ քաշեց . և
գլխի յէլքէնով ինկաւ հովուն մի կողմն .
եթէ առջեն ինկնէր Անատօլի շուտով
կու գտնէեանք . ապա ավլաշտրմիշ ա-
նելով՝ հազիւ էրէկլու խըյին բռնե-
ցանք . զանտիլիցա ձգելով երկաթ ձը-
գեց . զիրա հովն զարա ել էր . զամա-
րան կու փախճիս մի շուտով : Անդ մնա-
ցաք գիշերս այս . ապա առաւտուն ե-
լաք ճանապարհ . կ'ուզեմք ըստամզօլ .
որ է օրս այս երկուշաբթի , և է յունիսի
հինգն . և երկնային վիճակի հինգշաբ-
թի . նստեալ եալեմք ահա մօտեցանք ,
կամ՝ մեզի խայրլիներ կուզայ , ասելով՝
ուրախութիւն աստ է , եղբայր . եկանք
Այ – Յտէֆան , մէկ զայելս չիկայ . կ'ա-
սենք թէ Մախըր գիւղն են . աստ եկաք ,
նոյնպէս հոն ևս չի կայր զայեխ . մեր
հաճի Սուքիեան կու սրդողի թէ ինչու
տղաքն շեկան . և ես ասացի թէ շիմա-
ցան , հաճի , մի սրդողիր : Եա եղբայր ,
նաւին մէջն այնչափ ուրախութիւն կայր ,
շեմ կարնար պատմել . ոմանք զբեռներ
հազըր կ'անեն . ոմանք զճիզմէնին կու
հազնին , ոմանք կին՝ զգէրաճէն կու
հագնի : Անցաք Մախըր գիւղն . Պարութ-
ղանան , թէտիղուլէն , Նառն , Սամա-
թեան , Տաւութ – փաշան , Յէնկի – զա-
փուն , Ղում – զափուն , Ղաթլատըն . Ա-

խըր զափուն . մինչ որ երեւաց Ղըզղու-
լէն՝ իսկի նաւ չեկաւ վերանիս . քանզի
աչըխն էաք : Յետոյ ասացի ըռէիզին ,
թէ Հաճի , շէհիրտէ տույմատըլար պի-
ղիմկէլտիկիմզի . կէլ պիր վոլթայ էյլէ
գըյիեայ կիր . նա ևս ասաց , թէ պէնիմ
նիյթիմ տէ օտուր . վոլթայ մի արաւ ,
իջաւ ղըյին Յէտիղուլէին և Նառլյին
արալըխն : Յետ դարձաք , դէպի այս կող-
մըն գալն իրէն , տեսաք երկու չիփտէ
պարապ զայեխ մի , կանչեցաք . և մեր
նաւէն հանեցաք զմիւճտէնին . Եթէ
հարցանես թէ ով ոք են . Սամաթեացի
Չորոտ բորոտի աղջիկն մահուտ , և Սըր-
մայքէշ հաճի Արութիւնն , և Թօփա-
լիկն . սոքա յորժամ ելան դուրս , առ
ընտի , նաւերն թափեցան , և ես պատ-
րաստեցայ զբեռներն հանեցի . և զզամա-
րան պարպեցի . նատայ դէպ'ի Յէնկիզա-
փուն կու հայիմ . և Սամաթեացի Խորա-
սանճի մահտէսի Նիղողոսն , և էքմէքճի
մահտէսի Ղուկասն փիեատէ մի կանչե-
ցին , մտան մէջն և գնացին : Նա տեսնեմ
որ զօլ զայեխըն հասաւ և կանչեց ըռէի-
զին , թէ բեռ մի հաներ դուրս , գնաց նո-
ցա հասաւ և հախլայմիշ արաւ . դարձաւ
եկաւ նաւն ելաւ վեր . և 'ի տեսանելն զիս
իսկոյն ճանաչեց զիս և ասաց , Փափազ ,
հօշ կելտին . և ես զնա շնորհակալեցի
վասն ահի սընտուկներուս . գնաց խը-
շըն նստաւ . կայր հետն մէկ երկու շու-
խատար . նա ձայնեց նոցա թէ փափա-
զըն շէնյին ինձիթմէն . նոքա բաց թո-
ղին բայց մինն կտոր մի պատըրմաս
էառ , և միւսն երկու ըռուպ էառ . եթէ
առաջմանէ ճանաչէի՝ զայն ևս շէի տար .
բայց իմ կողմանէ հէլալինայ : Նա տես-
նես որ մէկն եկաւ , թէ պաշին դին տէր
Խաչատուրն եկեր քեզ կու հարցընէ . ես
այլ գնացի պաշին դիհն , կանչեցի թէ
տէր Խաչատուր . նա չիլսեց , քանզի
շամաթան շատ , յետոյ Խաչուկ զայեխ-
ճին լսեց . եանաշմիշ եղան ելան վեր ,
տէր Խաչատուրն , հաճի Արինտոսն և
Մինասիկն . շուտով զբեռներն նաւըն
զըին , յէրլէշտիրմիշ արին . և տէր Խա-
չատուրն կ'ասէ թէ ստակ պէտք է մի .
և ես ասացի թէ տահա խաշլս ունիմ .

զարտ զնաւի մէջի եղեալ սապոնն : Եւ մոտաք դայեխ , 'ի ծովու վերոյ շատ մարդ յետ դարձաւ . ինձ համար եղողներն : Երբ եկաք թէնկիզափուն՝ իսկէլէն այր և կին ըրըխտըմէին եղեր . նա խաչուկն ասաց թէ դուք դուրս ելէք զբեռներն յետոյ կամաց կամաց կու հանեմք . ես այլ եղբայրս և աներձագս դրի բեռներուն վերայ , ելայ դուրս : Առ ընտի քեզի զալապալըխ քան զչափն աւելի . մինչ չե 'ի քօշէն եկաք՝ տահա մարդ կայր որ մեր գալն չէր աւտար . ապա աղայիս շուրջառն բերաւ Պէտան տէրտէրն , ձրգեց վերաս և կերոն ետուր ձեռս . ես առաջնէ և հաճի իրիցկինն յետիւէ , եկաք սուրբ Աստուածածին եկեղեցին մտաք , յորժամ մտայ եկեղեցին՝ այնպէս թուեցաւ ինձ , թէ առաստաղն զլուխս կու դպչեր կամ խորաննին մանտրցեր . սովորեցանք սուրբ Երուսաղէմբարձրաշէն եափուներն : Ապա յետ աւետարանին ասին զպահպանիչն . և ասացի տէր խաչատուրին թէ չորս զօլօթա տուր քահանայից . և ելաք դուրս , թագաւոր դովոլ սկսեցին : Եկաք տուն . բազում ուրախութիւն եղև :

Գոհութիւն Քրիստոսի . Աստուածն ամենայնի ամենեցուն արժանի անէ , որ մեր նման գնան և գնան հանգիստ : Այս եղեւ աւարտ պատմութեանս . եղբայր , սակաւ ինչ ծաղկաքաղ արի , և լիակատար գրեցի . 'ի գնալն մեր էր թուական Հայոց հազար հարիւր վախտունին սեպտեմբեր ամսոյ ինը , պատկեր աւուր կիրակի . և գալն մեր հազար հարիւր վախտունըմէկ , յունիս ամսոյ հինգ , օրն հինգշաբթի : Յորժամ ընթեռնուք մի ձանձրանաք . քանզի տեղեաւըն և չափովս գրեցի . գոհանամ 'ի տեառնէ որ ետ կարողութիւն գրելոյ . և նմա փառք և պատիւ և գոհութիւն անզրաւ յաւիտենիւ . ամեն :

Կը շարունակո՞ւ :

=====

ԵՐՈՒԱՆԴ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա.ՐԱ.ՐՈՒԱ.Ծ Դ.

ՏԵՍԻԼ Ա.

ՏՈՒՐ ԿԱՅ ԿԱՎԵԱԼ ՃԵՌԱՔ 'Ի ԲԱՆՏԻ , ՄՈՒՐ ՃԱԾՈՒԿ 'Ի ԾՈՑԻ ԽԵՐՈՒՄ :

Զայս գու ինձ հատուցանես փոխարէն , անադրոյն երկինք , զի՞ մեղայ եթէ 'ի բռնաւորէ աստի հանգուցանել հնարեցայ զերկիր : Բազգն դժանի ոչ գիտասցէ երբէք մեղկել զսիրա Տուրայ . զի՞նչ ինձ պատրաստեալ կայցէ . մի թէ յետինն 'ի չարեցաց անողոքելին մահ . չեմայնչափ անարի 'որպէս զի զարհուրել 'ի մահուանէ . եթէ բարի ինչ է մահ , կամակար մոտագիւր պարտ էր մարդկան մեռանել . իսկ եթէ չար , գոնեայ յերկիւղէ ակնկալըլութեան նորա զերծանել . իսկ զի՞նչ այլ երկիւղալը գուցէ 'ի մահ : Ահաւասիկ սուսեր մի գաղտնի՞ զոր ապաւէն վերջն առ իս ունիմ միշտ , թէ հարկ ինչ վեցի ընդ այն ելանել . քան թէ յայլցոց ճեռաց անկանել : Յանդիման յերես իսկ յայտնեցի բռնաւորին զթշնամութիւն իմ , գիտաց զի ոչ պարգևել նորա ստերիւրեցին զիս սիրել զբանաւորութիւն . արդ կեցի շատ . կեանք մարդոց 'ի գործոց արդեացն չափի , ոչ 'ի խուռն համարոց ամացն թուոյ . ուր իցեն դահճան իմ . զԾուրայ տեսին ցարդ արութիւն 'ի կեանս տեսցեն 'ի մահու : Միայն կարոտիմ վերջին համբուրի սիրոյ հօրն իմոյ Արգամայ . ահ , մեծ է ինձ օրս յաւուրա կենաց , յորում այսպիսոյ քաջի գտայ ես որդի . սակայն թէ թէ որպէս կամ զիարդ ոչինչ կարաց ասել ինձ յայտնի . հազիւ ինչ բանի մի խօսեալ ընդ իս , ստիպեցաք բաժանիլ 'ի միմեանց ընդ մէջ գիշերին ... Այլ զի՞նչ է շնչիւնս 'ի բանտի , ահ , շաշին զինուց լսեմ . յիմ վերայ դիմեալ դան սպանանել . հապա , սիրո իմ , յառաջնեցուք . (Գայ չոր առաջնորդ 'ի սիրա) : Ահաւասիկ եմ ես ...

ՏԵՍԻԼ Բ.

ԱՐԳԱՄ , ՏՈՒՐ :

ԱՐԳ . ՏՈՒՐ , որդեակ իմ , զի՞ գործես , գարձու ըզսուրդ :

ՏՐ . Արգամ , բաքէ , հայր իմ . որ ասաղ բարերար առաջնորդեաց քեզայսր . զի՞նչ արիւն է այդ որ շողայ 'ի սուրդ :

ԱՐԳ . Արիւն բանապահացն է . յոյր ձեռս արծաթ է և սուր , զի՞նչ ինչ նա տկարասցի գործել . էր զոր որսացայ , էր զոր ահաբեկ արարի գնդաւս , և էր զոր հարի անխնայ բանալ ինձ ձանապարհ յազատել զքեզ . և փոխանակ ընդ առաջին անգիւթեանն հայրախնում գթով բարիս դարձուցանել կենաց որդեկիդ . (Ըսծանէ) : Արի եկ 'ի գիրկս իմ , սիրեցեալ որդեակ , ընկալ